

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Օգոստոս 2026

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցության կողմէ, Վենետիկի “STUDIUM MARCIANUM” Հաստատության հետ գործակցաբար, կազմակերպուած Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը **տեղի պիտի ունենայ Օգոստոս 3-19: Քննութիւնները՝ Օգոստոս 19-ին:**

ԺԱՄԱՆՈՒՄ՝ Օ գ ո ս տ ո ս 2 -ին (արձանագրութիւններ), ՄԵԿՆՈՒՄ՝ Օգոստոս 20-ին:

ԴԻՄՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ՝ Ապրիլ 30:

Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ, ներառեալ վերապատրաստութեան համար եկող հայերէն լեզուի ուսուցիչները:

Դասերը տեղի կ'ունենան ամէն օր, Երկուշաբթիէն Շաբաթ, **օրը հինգ պահ՝ առաւօտեան:**

Դասընթացքի տեւողութիւնը յարանային 65 ժամերէ կը բաղկանայ, բաժնուած՝ 13 օրերու վրայ:

Դասերուն ներկայութիւնը **ՊԱՐՏԱԳՐԻՒՄ** է: Մասնակցութեան համար պահանջուած **նուազագոյն տարիքն է 18**, բայց դասընթացքի **վարիչը կրնայ բացառել** ծնողքին գրաւոր հաւանութեամբ: Դասերը տեղի կ'ունենան Վենետիկի STUDIUM MARCIANUM-ի գլխաւոր շէնքին մէջ՝ <https://www.seminariovenezia.it/cms/galleria/il-seminario/>: Դիմումները պետք է կատարուին ԱՆՉԱՄԲ եւ ԳՐԱԲՈՐ, նշելով միշտ ՀԵՌԱԽՕՍԻ համար մը եւ ԵԼԳՐԱՅԻՆ (E-Mail) հասցէ մը:

Դասընթացքին զուգահեռ տեղի կ'ունենան մշակութային ձեռնարկներ՝ մասնագիտական դասախօսութիւններ (ծրագիրը յայտարարելի՝ գարնան վերջերը), վենետիկեան այցեր, մասնակցութիւն Վերափոխման Ս. Պատարագին եւ Խաղողօրհնէքին՝ Ս. Ղազարու Սայրավանքին մէջ: ՓԱՓԱՔՈՂՆԵՐՈՒՄ, կէսօրէ վերջերը, ԶՐԻԱԲԱՐ ԿԱԲԱՆԴՈՒԻՒՆ՝ ԴՈՒԴՈՒԿԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒՄ դասեր:

Արձանագրութեան սակն է՝ 900 €, որ կը ներառնէ յարանային դասերը եւ վերոյիշեալ այլ գործունէութիւնները: 10% զեղչ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն զեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (կողակից, ծնողք, քոյր, եղբայր): **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱԿԸ ՈՉ ՄԷՎ ՊԱՐԱԳԱՅԻ ԿԸ ՓՈԽՈՒԻ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐԵՒԷ ՊԱՏՃԱՌՈՎ ՉԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ, բացի բժշկական վկայագրով հաստատուած հիւանդութեան պարագայէն:**

Դրամատնային փոխանցումին (bank transfer) համար, յետ դիմումին ընդունելութեան՝ դիմորդը պիտի ստանայ Պո-Արաքս Ընկերակցութեան դրամատնային հաշուի հարկաւոր տեղեկութիւնները (հաշուէթիւ / IBAN եւլն.): **Դրամատնային կամ այլ կերպի փոխանցումի բոլոր ծախսերը** դիմորդին կը պատկանին:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած՝ խոհանոցային յարմարութիւններով:

Իւրաքանչիւր **ճաշ կամ ընթրիք**, որու ծախսը պետք է ԱՆՉԱՄԲ հոգայ իւրաքանչիւր ընթացորդ, կրնայ արժել 13-18 Եւրոյ:

Կեցութեան ծախսն է (2-19 Օգոստոս ներառեալ, 18 գիշեր)՝

✓ 1008 € անձ գլուխ, երկու հոգինոց սենեակի մէջ:

✓ 1494,00 € մէկ հոգինոց սենեակի մէջ:

Սենեակի ներառեալ ծառայութիւններ՝ զովասարքիչ, համացանց (internet), մասնաւոր ճեմիչ եւ լուսցարան, փոքր խոհանոցային անկիւն: Սենեակին մէջ մագ չորցնող գործիք չկայ:

Դասընթացքի **կեցութեան ծախսը կարելի չէ օրական դրութեամբ հաշուել՝ եթէ մէկը մի քանի օր նուազ պիտի մնայ:** Բոլոր անոնք որ կը փափաքին նշուած թուականներէն առաջ հասնիլ կամ աւելի վերջ մեկնիլ, **այդ յաւելեալ օրերուն համար** իրենց բնակավայրը՝ պետք է որ իրենք անձնապէս հոգան եւ

զատեն վճարեն: Իսկ անոնք որ դասընթացքի օրերուն իրենց կեցութիւնը անձամբ պիտի հոգան ուրիշ տեղ, կը խնդրուի որ այս պարագան անմիջապէս հաղորդեն դասընթացքի վարչութեան:

Ընդհանուր գումարին **1000 Եւրոյի բաժինը** պէտք է վճարուի կանխաւ՝ մինչեւ **Ապրիլ 30:** Այս կանխավճարը պէտք է կատարուի **դրամատնային փոխանցումով:** Ընդհանուր գումարին մնացեալ մասը կարելի է վճարել նոյնպէս դրամատնային փոխանցումով մինչեւ 1 Յուլիս: Այս լրացումը կարելի է նաեւ կատարել **ՄՈՒՏՔԻ ՕՐԸ (2 Օգոստոս)** հնչուն դրամով: **ՎԱՐԿԱԹՂԹԱՅԻՆ (Credit card)** վճար **չ'ընդունուիր:** **Առանց լրացնելու այս վերջնական վճարումը ԿԱՐԵԼԻ ՉԷ ՍԵՆԵԱԿ ՄՏՆԵԼ:** **ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԻԱՆԳԱՄԱՅՆ՝ որ ամէն մասնակցող ունենայ ապահովագրութիւն հիւանդութեան եւ արկածներու համար եւ ապահովագրութեան փաստագրէն օրինակ մը ներկայացնէ արձանագրութեան պահուն:**

Ջերմօրէն կը յանձնարարենք փախադրամիջոցներու համար **CARTA UNICA** գեղչաքարտի գնումը, որով Վենետիկի տարածքին երթելակի գիները աւելի քան կը տասանորդուին:

Ամէն յաւելեալ տեղեկութեան համար գրել՝ info@padus-araxes.com հասցէին եւ cc: zkybhs@gmail.com. Անհրաժեշտութեան պարագային հեռաձայնել **Երեքշաբթի եւ Հինգշաբթի** օրերը, **ԻՏԱԼԱԿԱՆ ԺԱՄՈՎ, 10.30-էն մինչեւ 13.00** հետեւեալ բջջային համարին՝ **+39.379.1330687:** ԼԱՒ ՄՏՈՒԳԵԼ ԻԻՐԱՔԱՆՉԻԻՐ ԵՐԿՐԻ ԻՏԱԼԻՈՅ ՆԿԱՏՄԱՍԲ ԺԱՄԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ: Պատասխան չստանալու պարագային՝ **WhatsApp**-ով լուր մը դրկել. ըստ հնարին շուտով պատասխան պիտի ստացուի:

Կազմակերպութիւնը պատասխանատու չէ տպագրական պատահական սխալներու նկատմամբ: